

ԴԱՍ 8. ԳԼՈՒԽ 3 — ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Հայտնություն 3:7-13 Նամակ Ֆիլադելֆիային

Նոր կտակարանյան ժամանակաշրջան New Testament Period

- **Եփեսոսը**՝ մեծ քաղաքական կենտրոն էր:
- **Զմյուռնիան** առևտրի մեծ կենտրոն էր:
- **Պերգամոնը**՝ մեծ կրոնական կենտրոն:
- **Թիվասիքը**՝ հայտնի է եղել իր Մանրագործվածքներով, հասկապես մանուշակագույն ներկերի եւ նրա առևտրի արտադրությամբ: (մանուշակագույն ծածկոցը խորհրդանշում էր կառավարող իշխանությունը)
- **Սարդիկեն** հայտնի է եղել Ոսկուց և արծաթից պատրաստված մետաղադրամներով:
- **Ֆիլադելֆիան** հայտնի է եղել իր խաղողի այգիներով:

14-րդ դարում, Ֆիլադելֆիա քաղաքը միայնակ կանգնած էր ողջ թուրքական կայսրության դեմ որպես ազատ, ինքնավար քրիստոնեական քաղաք թուրքական երկրի մեջ: Երկու անգամ պաշարվել է թուրքական հզոր բանակի կողմից, բնակչությունը պակասեց սովի պատճառով, նրանք սովորեցին պաշտպանվել և մինչև վերջ դիմադրեցին:

1379-1390թթ. այն վերջնական արդյունքում խորտակվեց թուրքական և բյուզանդական բանակների ճնշման տակ: Մինչ այդ Ֆիլադելֆիան ամուր էր: Այսօր, մի քանի ընդհատակյա քրիստոնյաներ են ճնշում այնտեղ, ինչպես սովորաբար լինում է իսլամական պետությունների մեջ:

7) Եվ Ֆիլադելֆիայում գտնվող եկեղեցու հրեշտակին գրի՛ր...

1. Ֆիլադելֆիա – («Միրո եկեղեցին»)

Անունը. phile. ընկերություն, սեր, delphus. քաղաք = Ընկերության քաղաք:
Այսօր. Ալլահ Շեհու. «Աստծո քաղաք», կամ Ալաշեհիր. «կարմիր քաղաք»:

2. Քրիստոսի տիտղոսը – Title of Christ

7) «Այսպես է ասում **Սուրբը, Ճշմարիտը, Նա, ով Դավթի բանալին** ունի. Նա, ով բացում է, և չկա մեկը, որ փակի. և փակում է, և չկա մեկը, որ բացի»:

«Սուրբը»

- «Սուրբ» (Հայտն. 6:10, Ղևտ. 11:44, 21:8, Ես. 57:15), սերովբեների երգը (Ես. 6:3)
- Իր ծննդի ժամանակ (Ղուկ. 1:35)
- Իր մահվան ժամանակ (Գործք 2:27)
- Իր ներկայիս քահանայական պաշտոնում (Եբր. 7:25)

«Ճշմարիտը»

Յով. 17:3 - 3 Եւ սա է հավիտենական կեանքը, որ ճանաչենք քեզ միայն ճշմարիտ Աստուած. եւ նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին:

1 Յով. 5:20 - 20 Եւ գիտենք որ Աստուծո Որդին եկավ եւ մեզ միտք տվեց, որ ճշմարիտը ճանաչենք. եւ ճշմարիտում ենք, այսինքն նորա Որդի Հիսուս Քրիստոսում, նա է ճշմարիտ Աստուածը եւ հավիտենական կյանքը:

Ո՞վ է «Դավթի բանալին»: _____:

«Դավթի բանալին»

«²⁰ Եւ այն օրը կլինի, որ կկանչեմ իմ ծառային՝ Քեդկիայի որդի Եդիակիմին. ²¹ Եւ նորան կհագցնեմ քո պատմուճանը, եւ քո գօտին նորան կկապեմ, եւ քո իշխանությունը կտամ նորա ձեռքը եւ նա հայր կդառնա Երուսաղեմի բնակիչների եւ Հուդայի տան համար: ²² Եվ Դավթի տան բանալին նրա ուսին պիտի դնեմ. որ բացի, և ոչ ոք չփակի, ու փակի, և ոչ ոք չբացի: ²³ Եվ **սեպի մեխի** (ԴՏ՝ yâted means properly a peg, pin, or spike;) պես նրան հաստատուն մի տեղ պիտի ամրացնեմ, և իր հոր տան համար

փառաց արթոռի պես պիտի լինի: 24 Նրա վրա պիտի կախեն իր հոր տան ամբողջ փառքը, սերունդն ու պտուղը՝ բոլոր փոքրիկ անոթներից մինչև գավաթներն ու ամեն տեսակ սափորները»: 25 «Այդ օրը,- ասում է Զորաց Տերը,- հաստատուն տեղում ամրացված սեպը (մեխը) պիտի հեռացվի, կոտրվի ու ընկնի, և այն բեռը, որ նրա վրա էր, պիտի վերցվի»։ Քանզի Տե՛րը խոսեց»:

Եսայի 22:20-25

- Եղիակիմ (երբ Սեբնան՝ Եգեկիայի գանձապահը, դուրս արվեց և փոխարինվեց. Ես. 22:19-24):
- **Կառավարման ամբողջական իշխանություն.** Եղիակիմն իր ուսի վրա կրում էր մի ծանր բանալի, որ խորհրդանշում էր նրա իշխանությունը՝ մարդկանց թույլ տալու կամ մերժելու՝ թագավորի հետ տեսակցություն ունենալու: Նա էր միայն թույլ տալիս՝ մտնելու թագավորի մոտ:
- **Մեսիական տերմին.** Ես. 9:6,7, Ղուկ. 1:32-33, Մաթ. 28:18, Հայտն. 1:18: «Սեպը» (մեխը) մեսիական է: Խաչի մասին 25-րդ համարում է:

Մեզ համար մի մանուկ ծնուեց, մեզ մի որդի տրուեց, եւ իշխանութիւնը կլինի նորա ուսի վրա, եւ նորա անունը կկոչուի Սքանչելի, Խորհրդական, Հզօր Աստուած, Հաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան իշխան: Նա մեծ կ'լինի, եւ Բարձրեալի Որդի կ'կոչուի. եւ Տէր Աստուածը նորա Դավիթ հօր արօրը կ'տա նորան. եւ նա հավիտեան կ'թագաւորէ Հակոբի տան վրա. Եւ նորա թագաւորութեանը վերջ չի լինիլ: Եւ Հիսուսը մօտ գալով նորանց հետ խօսեց եւ ասեց, Ամեն իշխանութիւնն ինձ տրուեց երկնքումս եւ երկրումս. Ես մեռած էի, եւ ահա կենդանի եմ հավիտեանս հավիտենից, ամէն. եւ ունեմ դժոխքի եւ մահի բանալիները:

Ոչ թե «միայն Պետրոսին»

- «Արքայության բանալիները» Պետրոսի՞ն (Մաթ. 16:19) և բոլոր առաքյալների՞ն (Մաթ. 18:18)
- Հեթանոսների համար դուռ էր բացվել (Գործք 10)
- Պարզաբանված է նրա 1-ին Թղթում (Ա Պետ. 2:4-9)

«Իսկ դուք ի՞նչ եք ասում Իմ մասին, ո՞վ եմ Ես»: Միմոն Պետրոսը պատասխանեց ու ասաց. «Դու Քրիստոսն ես՝ Կենդանի Աստծո Որդին»: Եվ Հիսուսը պատասխանեց ու ասաց նրան. «Օրհնյալ ես դու, Միմոն՝ Հոֆասանի որդի, քանի որ ո՛չ թե մարմինն ու արյունը հայտնեցին քեզ, այլ՝ Իմ Հայրը, որ երկնքում է: Եվ Ես էլ ասում եմ քեզ, որ դու Պետրոսն ես. և այս վեմի վրա պիտի շինեմ Իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթահարելու այն: Եվ Ես կտամ քեզ երկնքի թագավորության բանալիները, և ինչ որ կապես երկրի վրա՝ պիտի կապվի երկնքում, և ինչ որ երկրի վրա արձակես՝ պիտի արձակվի երկնքում»:

Մատթեոս 16:15-19

Թագավորական քահանայություն

Բայց դուք մի ընտրյալ սերունդ եք, **թագավորական քահանայություն**, սուրբ ազգ, Նրան պատկանող ժողովուրդ, որպեսզի հռչակեք Նրա փառաբանությունները, Ով խավարից ձեզ Իր սքանչելի լույսին կանչեց:

Ա Պետ. 2:9

Միայն երեքը՝ Մելքիսեդեկը, Քրիստոսը և «եկեղեցին, 24 երեցները»... (Հայտնություն 4-րդ գլխից):

Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում: Դարձյալ ասում եմ ձեզ, եթե ձեզանից երկուսը երկրի վրա միաբանվեն որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, պիտի կատարվի նրանց համար Իմ Հոր կողմից, որ երկնքում է:

Մատթեոս 18:18,19

Մենք Քրիստոսում ունենք իշխանություն և զորություն՝ կապելու թշնամուն (արգելել, փակել դուռը նրա վրա) և քանդել նրա կապերը մեր վրայից (Սաղմ. 146:7-8), և մենք ունենք իշխանություն և զորություն՝ բացելու դուռը և թույլ տալու թշնամուն՝ ներս մտնել և կապել մեզ

(Դուկ. 10:19):

3. Գովասանք – Commendation

8) Գիտեմ քո գործերը. ահա քո առջև մի **բաց դուռ** դրեցի, և ոչ մեկը չի կարող այն փակել. քանի որ դու քիչ ուժ ունես և պահեցիր Իմ Խոսքը և **անունս չուրացար**:

«**Բաց դուռ**». Ա Կորն. 16:9, Բ Կորն. 2:12, Կող. 4:3:

1 Կոր. 16:8-9 - 8 Բայց հիմա Եփեսոսում եմ ժամում՝ մինչեւ Պենտեկոստէն: 9 Վասնզի մեծ եւ արդիւնավոր դուռ է բացուած ինձ, եւ հակառակողները շատ են:

2 Կոր. 2:12 - 12 Բայց երբոր ես հասայ Տրովադա Քրիստոսի աւետարանի համար, եւ դուռն ինձ համար բաց էր Տէրով.

Կող. 4:3 - 3 Եւ մեզ համար էլ աղօթք արեք, որ Աստուած բացի մեզ համար խօսքի դուռը խօսել Քրիստոսի խորհուրդը, որի համար էլ կապուած եմ:

Փրկութեան դուռ. «Ես եմ դուռը» (Հովհ. 10:7,9), Նոյի տապանը. փակված Աստծո կողմից (Ծննդ. 7:16. **7 օր նախքան ջրհեղեղը**), Հարսանիքի դուռը (Մաթ. 25:1-10):

Ծննդ. 7:16 - 16 Եւ մտնողներն արու եւ էգ մտան ամեն մարմնից, ինչպէս Աստուած նորան պատուիրել էր: Եւ Եհովան նորա ետեւիցը դուռը փակեց:

Մատ. 25:5,10 - 5 Եւ երբոր փեսան ուշացավ, ամենքը թմրեցան եւ քնեցին: 10 Երբ նրանք գնացին, որ գնեն, փեսան եկաւ, եւ ովքեր պատրաստ էին, նրա հետ հարսանիքի սրահը մտան, ու դուռը փակուեց:

«...**անունս չուրացար**». այն օրը, երբ Քրիստոսի աստվածութիւնը խայտառակ կերպով ուրանում են սեմինարներում և ամբիոններից, ինչպիսի՞ «դեսպան» ես դու:

9) Ահա՛ նրանց, ովքեր սատանայի ժողովից են, որոնք ասում են, թե հրեա են, բայց իրականում հրեա չեն, սուտ են խոսում, ահա՛, սրանց ստիպելու

եմ, որ գան և երկրպագեն քո ոտների առաջ և իմանան, որ Ես **սիրեցի**
(ἀγαπάω, agapaō) քեզ:

«...սատանային ժողով (սինագոգ, ժողովարան)...». օրինապաշտնե՞ր:
Հայտն. 2:9: «Մուտ հրեաներ»: Ստիպված կլինեն երկրպագելու (Փիլ.
2:10,11):

Փիլիպ. 2:10-11 - 10 Որ Հիսուսի անունով կրկնուի ամեն ծունկ
երկնավորների եւ երկրավորների եւ երկրի տակ լինողների, 11 Եւ
ամեն լեզու դավանէ, թէ Հիսուս Քրիստոսը Տէր է Հօր Աստուծո Փառքի
համար:

10) Քանի որ պահեցիր **Իմ համբերության խոսքը**, Ես էլ քեզ պահելու եմ
փորձության ժամանակ, որ գալու է ամբողջ աշխարհի վրա՝ երկրիս
երեսին բնակվողներին փորձելու համար:

«**Իմ համբերության խոսքը**». Բ Թեսաղ. 3:5: Նա սպսում է հազարամյա
թագավորությանը (Մադմ. 110, Եբր. 10:12,13):

2 Թես. 3:5 - 5 Իսկ Տէրը ուղղէ ձեր սրտերը դէպի Աստուծոյ սէրը եւ
դէպի Քրիստոսի համբերութիւնը:

Նախահազարամյակի ուսմունք – (Սկզբունքային ճշմարտություններից
մեկը, որ ավետարանական շարժումը բացահայտեց 19-րդ դարում, Տիրոջ
վերադարձն է Իր Եկեղեցու հետևից):

Ջեռացում, թե՛ դիմադրելու կարողություն (հետահազարամյակի մերժում)

- Փորձությունից, 70-րդ շաբաթից. Հունարեն ek = «ինչ որ բանից»,
տեղափոխում, հեռացում
- Հունարենում մասնիկներ են. փորձություն և ժամանակ
- Ամբողջ աշխարհի վրա (Հայտն. 6-19)
- **Նպատակը.** «երկրիս երեսին բնակվողներին փորձելու», հեթանոս
հավատացյալները փորձությունների մեջ պաշտպանված չեն.
նրանց սպանում են: Հայտն. 7:9-17, 11:7, 13:7,15, 17:8, 20:4

Մա միակ նամակն է, որտեղ խոստում կա՝ պահելու «մեծ նեղությունների» ժամանակ: (Ուրիշ ոչ մի տեղ չի ասվում, որ պատրաստվենք Մեծ նեղություններին...)

4. Անհանգստություն – Concern

Ո՛չ Ֆիլադելֆիան, ո՛չ էլ Ջմյունիան ոչ մի քննադատություն չունեն. այս երկու քաղաքները մինչև հիմա էլ կանգուն են:

5. Քաջալերանք – Exhortation

11) Ահա, Ես **շուտով գալու եմ**, ամու՛ր ք պահիր ունեցածդ, որ մեկը **չխլի քո պսակը**:

1. Եփեսոս — զոջա, եւ առաջի գործերն արա. ապա թե՛ ոչ՝ կ'գամ շուտով քեզ մօտ,
2. Ջմյունիա — ?
3. Պերգամոնը — Ապաշխարիր, ապա թե՛ ոչ՝ շուտով քեզ մօտ կ'գամ.
4. Թիվատիրը — Բայց այն որ ունիք պահեցեք մինչեւ որ ես կ'գամ:
5. Սարդիկե — ապաշխարիր. ապա թե՛ չ'արթնանա՛նք ես կ'գամ քեզ վերայ գողի պէս
6. Ֆիլադելֆիա — Ահա, Ես շուտով գալու եմ, ամու՛ր ք պահիր ունեցածդ
7. Լավոդիկե — ապաշխարիր. Ահա ես դռան առաջին կանգնած եմ եւ թակում եմ.

«Պսակ». հաջորդ գլխում մեծ կարևորություն ունեցող թեմա:

«Շուտով» = «հանկարծ». հունարենում: (Եթե Իրեններին հավաքելը տեղի ունենա Դանիելի 70-րդ շաբաթից հետո, ուրե՛մս ոչ մի «անմիջական» վերադարձ):

«Որ մեկը չխլի քո պսակը»


- Եսավը իր տեղը զիջեց Հակոբին (Ծննդ. 25:34, 27:36)
- Ռուբենը իր տեղը զիջեց Հուդային (Ծննդ. 49:4,8)
- Մերիպայում իր քայլի համար, Մովսեսին փոխարինեց Հեսուն (Թվ. 20:12, Բ Օր. 3:26-28)
- Սավուդն իր տեղը զիջեց Դավթին (Գ Թագ. 16:1,13)
- Մեբնան իր տեղը զիջեց Եղիակիմին (Ես. 22:15-25)
- Հովարն ու Աբիաթարն իրենց տեղերը զիջեցին Բանեային ու Սադովկին (Գ Թագ. 2:25)

- Եղիային փոխարինեց Եղիսեն (Գ Թագ. 19:13-16)

6. Խոստում հաղթողներին – Promise to the Overcomer

12) Նա, ով հաղթի, նրան Իմ Աստծո **տաճարին սյուն են** դարձնելու, ու այլևս դուրս չեն գալու այնտեղից. և նրա վրա Իմ անունն են գրելու և Իմ Աստծո քաղաքի անունը, Նոր Երուսաղեմ, որ իջնում է երկնքից, Իմ Աստծուց. և Իմ նոր անունը:

3 Թագ. 7:21 - 21 Եւ սիւները կանգնեցրեց տաճարի սրահումը. Եւ կանգնեցրեց աջի սիւնը, եւ նորա անունը դրաւ **Յաքին** “**Yah will Establish**” . Եվ կանգնեցրեց ձախի սիւնը, եւ նորա անունը դրաւ **Բոոզ** “**By His Strength**”:



Յուրաքանչյուր նոր հավատացյալ կենդանի քար է. 1 Պետ. 2:5,
Եփես. 2:19-22

1 Պետ. 2:5 - 5 Դուք էլ կենդանի քարերի պես շինուեցեք հոգեւոր տաճար, սուրբ քահանայութիւն, որ հոգեւոր պատարագներ մատուցանեք Աստուծո ընդունելի՝ Հիսուս Քրիստոսի ձեռովը:

Սակայն նոր Երուսաղէմում – Եւ տաճար չ'տեսա նորա մէջ, որովհետեւ Տէր Աստուած Ամենակալը եւ Գառն է նորա տաճարը:

Հայ. 21:22

- Հաղթող Քրիստոնյաները կլինեն հավերժական սյուները
- Նրանց հագուստի վրա կփորագրվի փառավոր Աստծո երեք նշանները:
 1. Իր Փրկչի Անունը, Աստծո
 2. Իր երկնային քաղաքացիությունը
 3. Իր յուրատեսակ նոր անունը (Հայտ. 2:10)

Ո՞վ է «Հաղթողը»:

«Քանի որ ամէն ոք, որ Աստծուց է ծնուած, հաղթում է աշխարհին: Եւ ա՛յս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հավատը: 5 Եւ ո՞վ է, որ յաղթում է աշխարհին, եթէ ոչ նա, ով հաւատում է, որ Յիսուսն է Աստծու Որդին:»:

Ա Հովհ. 5:4,5

7. Ավարտ – Close

29) **Նա, ով ականջ ունի, թող լսի, թէ Հոգին ինչ է ասում եկեղեցիներին:**

Հաջորդ դասը

Կարդա 2-րդ և 3-րդ գլուխները: Ուրվագծիր Լավոդիկիային ուղղված նամակը (Հայտն. 3:14-22): Որո՞նք են այս նամակի առանձնահատկությունները: Ի՞նչ դեղամիջոցներ էին անհրաժեշտ: Կարդա Մատթեոս 13գլ.: Ինչու՞ էր Հիսուսն առականերով խոսում: Ի՞նչ գաղտնիքներ էին բացահայտվում: Ի՞նչ անձնական դասեր կարելի էր սովորել:

Խրատական մակարդակ (բոլոր եկեղեցիներին)

Admonitory Level (to all churches)

- ✓ Եփեսոս – Նվիրում, ոչ թե միայն վարդապետություն
- ✓ Ջմյունիա – Տոկալ (դիմանալ) նեղություններին
- ✓ Պերգամոն – Մաքրեզերծել դեսպանության ծառայությունը
- ✓ Թիվատիր – Հեթանոսական գործունեություն
- ✓ Սարդիկե – Ջգոնություն, արթուն վիճակ
- ✓ Ֆիլադելֆիա – Միսիոներական ծառայություն

Անձնական կիրառություն (Յոմուլետիկա)

Personal Application (Homiletics)

- ✓ Եփեսոս – Անտեսված առաջնայնություններ
- ✓ Ջմյունիա – Սատանայական ընդդիմություն
- ✓ Պերգամոն – Հոգևոր փոխզիջում
- ✓ Թիվատիր – Հեթանոսական գործունեություն
- ✓ Սարդիկե – Ջգոնություն, արթուն վիճակ
- ✓ Ֆիլադելֆիա – Հավատարիմ դեսպանություն

Խոստում հաղթողներին

Promise to the Overcomer

- ✓ Եփեսոս – Ուտել Կենաց ծառից
- ✓ Ջմյունիա – Չփասսվել երկրորդ մահից
- ✓ Պերգամոն – Մանանա, քար, անուն
- ✓ Թիվատիր – Իշխանություն ազգերի վրա
- ✓ Սարդիկե – Քայլել Նրա հետ ճերմակներով, անունը չի ջնջվի
- ✓ Ֆիլադելֆիա – Սյուն տաճարում, Աստծո անունը, Նրա քաղաքի անունը

Մարգարեական պատկերը

Prophetic Profile

- ✓ Եփեսոսը ներկայացնում է Առաքելական Եկեղեցին:
- ✓ Ջմյունիան ներկայացնում է հալածվող եկեղեցին:
- ✓ Պերգամոնը ներկայացնում է «ամուսնացած» եկեղեցին
- ✓ Թիվատիրի եկեղեցին ներկայացնում է (Միջնադարյան) Եկեղեցին:
Պապական իշխանությունը:
- ✓ Սարդիկեն ներկայացնում է Հարանվանական եկեղեցին:
- ✓ Ֆիլադելֆիան ներկայացնում է Միսիոներական Եկեղեցին: